

ԿԵՂԾ ԵՎ ՇԻՆԾՈՒ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԷՈՒԹՅՈՒՆ

Անի Մուրաֆյան

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված անվավեր գործարքներից են կեղծ և շինծու գործարքները, որոնք օրենսդիրը որակել է որպես առաջինը գործարքներ: Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի¹ 306-րդ հոդվածի համաձայն՝ «1. *Կեղծ գործարքը, այսինքն՝ առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության կնքված գործարքը, առաջինը է: 2. Շինծու գործարքը, այսինքն՝ մեկ այլ գործարքի քողարկման նպատակով կնքված գործարքը, առաջինը է: Այդ գործարքի նկատմամբ, հաշվի առնելով դրա էությունը, կիրառվում են այն գործարքին վերաբերող կանոնները, որը կողմերն իրականում նկատի են ունեցել շինծու գործարքը կնքելիս*»:

Հոդվածի շրջանակներում կփորձենք բացահայտել կեղծ և շինծու գործարքների (այսուհետ նաև՝ ֆիկտիվ գործարքներ) իրավական բնույթը՝ անվավեր գործարքների էության վերաբերյալ գրականության մեջ ձևավորված մոտեցումների համատեքստում: Մեր կարծիքով, նշված հարցի պարզաբանումը ոչ միայն տեսական կարևորություն է ներկայացնում, քանի որ ինչպես հայրենական, այնպես էլ օտարերկրյա հեղինակների կողմից կեղծ և շինծու գործարքների էությունն առանձին վերլուծության գրեթե չի ենթարկվել, այլ նաև փորձ է գտնելու գործնականում ծագած այն հարցի լուծումը, թե արդյոք կարող է կեղծ կամ շինծու գործարքի կնքման հետևանքով տուժած անձը (երրորդ անձը կամ գործարքի կողմը) պահանջել նման գործարքի կնքման հետևանքով պատճառված վնասի հատուցում: Օրինակ, հռոմեական իրավունքում բացարձակ սիմուլյացիան կողմերի միջև հարաբերություններում որևէ հետևանք չէր առաջացնում, սակայն կարող էր հանգեցնել երրորդ անձանց առջև կողմերի համապարտ պատասխանատվության առաջացման, եթե վերջիններս սիմուլյացիոն ակտերի հետևանքով վնաս էին կրել: Նման դեպքերում սիմուլյացիան կարող էր համարվել դելիկտ²:

Անվավեր գործարքի էության վերաբերյալ գրականության մեջ արտահայտված տեսակետները բավականին շատ են և բազմազան: Անվավեր գործարքի էությունը բացահայտվում է, և անվավեր գործարքի հասկացությունը տարբեր հեղինակների կողմից ձևավորվում է՝ նախ հիմք ընդունելով գործարքի օրենսդրական բնորոշումը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ «*Գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն*»: Գործարքի նշված օրենսդրական սահմանումից նախևառաջ բխում է, որ գործարքը գործողություն է, իսկ այդ գործո-

¹ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի ընդունված 1998թ. մայիսի 5-ին, ուժի մեջ մտած 1999թ. հունվարի 1-ին, ՀՕ-239:

² Տե՛ս *Пухан Иво, Поленак-Акимовска Мирьяна*, Римское право (базовый учебник). Перевод с македонского В. А. Томсинова и Ю. В. Филиппова/Под ред. проф. В. А. Томсинова.-М.: Издательство Зерцало, 1999, էջ 223:

ղության պարտադիր իրավաչափ լինելը հաստատվում է իրավաբանական գրականության մեջ առկա տեսակետներով¹: Պրինակ, Ի. Ս. Պերետերսկին նշել է, որ գործարքն օրենքով թույլատրված գործողություն է, և գործարքներ են համարվում միայն այն գործողությունները, որոնք նպատակ ունեն առաջացնելու օրենքով թույլատրվող իրավահարաբերություններ²: Հեղինակի կարծիքով, գործողությունները, որոնք թեև առաջացնում են իրավական հետևանքներ, սակայն չեն օգտվում օրենքի պաշտպանությունից (օրինակ, պարտավորությունը չկատարելը կամ վնաս պատճառելը), գործարքներ չեն համարվում: Հավասարապես, եթե գործողությունն ունի գործարքի տեսք, սակայն ուղղված է օրենքին դեմ կամ օրենքը շրջանցելուն, ապա այն չի համարվում գործարք: Հետևաբար գործարքներ են համարվում միայն այն գործողությունները, որոնք նպատակ ունեն առաջացնելու օրենքով թույլատրված իրավահարաբերություններ³:

Բազմաթիվ հեղինակներ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գործարքները բացառապես իրավաչափ գործողություններ են, անվավեր գործարքները դասում են ոչ իրավաչափ գործողությունների, այն է՝ իրավախախտումների շարքին⁴, իսկ որոշ հեղինակներ անվավեր գործարքները դիտարկում են այլ հարթության վրա՝ ոչ իրավաչափ լինելն անվավեր գործարքի հատկանիշ չհամարելով⁵:

Առաջին խմբի հեղինակներից, օրինակ, Ֆ. Ս. Խեյֆեցը նշել է, որ անվավեր գործարքը չի համարվում գործարք, այլ քաղաքացիական իրավախախտում է⁶: Ի. Վ. Մատվեևը նշել է, որ բացառությամբ կամքի արատով որոշ գործարքների՝ անվավեր գործարքները համարվում են ոչ իրավաչափ գործողություններ⁷: Օ. Ա. Կրասավչիկովը ոչ իրավաչափ գործողությունների շարքին է դասել վնասի պատճառումը, գործարքների անվավերությունը, իրավագործության խախտմամբ ընդունված վարչական ակտերը, պայմանագրային պարտավորությունների չկատարումը⁸: Ըստ Յ. Վ. Մելնիկովայի՝ կեղծ գործարքները հակաօրինական գործարքներ են⁹: Վ.

¹ Տե՛ս **Агарков М. М.** Понятие сделки по советскому гражданскому праву//Советское государство и право, 1946, էջ 48-49: **Քարսեղյան Տ. Վ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս (երրորդ հրատարակություն), Երևանի համալս. հրատ., 2006, էջ 206:

² Տե՛ս **Перетерский И. С.** Сделки, Договоры. М.: Юриздат, 1929, էջ 6:

³ Տե՛ս Научный комментарий к Гражданскому кодексу РСФСР под ред., **И.С. Перетерского.** Вып.5. М. 1929. էջ 6:

⁴ Տե՛ս **Алексеев С.С.** Гражданское право. Учебник под общей редакцией Алексеева С.С. 2-е издание. М. 2009, էջ 104, **Алексеев С.С.** Проблемы теории права. Курс лекций. Т 1. Свердловск. 1971, էջ 354-355: **Толстой Ю.К.** Содержание и гражданско-правовая защита права собственности в СССР. Ленинград. 1955. էջ 46. **Павлова Ирина Юрьевна.** Понятие недействительной сделки в российском гражданском праве: <http://www.jourclub.ru/31/1787/>

⁵ Տե՛ս **Тузов Д.О.** Общие учения теории недействительных сделок и проблемы их восприятия в российской доктрине, законодательстве и судебной практике: Автореферат дис. ... доктора юридических наук: 12 00.03, էջ 8: **Генкин Д.** Недействительность сделок, совершенных с целью противной закону//Ученые записки ВЮОН. М., 1947. № 5, էջ 48-51:

⁶ Տե՛ս **Хейфец Ф.С.** Недействительность сделок по российскому гражданскому праву. М: Юрайт-М. 2001:

⁷ Տե՛ս **Матвеев И.В.** Правовая природа недействительных сделок. Диссертация... кандидата юридических наук. М. 2002, էջ 8:

⁸ Տե՛ս **Красавчиков О.А.** Теория юридических фактов в советском гражданском праве. Автореф. канд. дисс., Свердловск. 1950, էջ 14:

⁹ Տե՛ս **Мельникова Ю. В.** Недействительность (ничтожность) мнимых и притворных сделок и их правовые последствия/Российский судья, 2014, № 11. էջ 7-12:

Ս. Յենը նշել է, որ առոչինչ գործարքը, լինելով ոչ իրավաչափ գործողություն, առաջացնում է միայն այն հետևանքները, որոնք օրենքով նախատեսված են այդ դեպքի համար՝ որպես իրավախախտման նկատմամբ ռեակցիա¹: Ե. Ա. Կրաշենինիկովը, նշելով, որ վիճահարույց գործարքը ոչ իրավաչափ լինելու որևէ նշույլ անգամ չի պարունակում, առոչինչ գործարքները համարել է միանշանակ ոչ իրավաչափ գործողություններ²:

Երկրորդ խմբի հեղինակներից, օրինակ, Ռ. Վ. Ռաբինովիչն իր աշխատանքում գրում է, որ անվավեր գործարքի համար, ի տարբերություն իրավախախտման, բավարար է միայն օբյեկտիվ իրավունքի խախտումը, և պարտադիր չի պահանջվում վնասի պատճառում ու գործարքի կողմի մեղքի առկայություն: Անվավեր գործարքները, որոնք օրենքով թույլատրված չեն, իրավունքի խախտում են: Այնուամենայնիվ, դրանք չեն դադարում գործարքներ լինելուց և որպես իրավախախտում ընկալվել չեն կարող³: Դ. Ս. Պենկինն առաջ է քաշում այն միտքը, որ ի տարբերություն իրավախախտման (դելիկտի)՝ գործարքին՝ որպես իրավաբանական փաստի, բնորոշ է քաղաքացիական իրավահարաբերություններ առաջացնելուն, փոփոխելուն կամ դադարեցնելուն ուղղված գործողության (կամքի) առկայությունը, իսկ դելիկտի դեպքում այն կատարած անձն ամենևին չի ցանկանում այդ կամ այլ իրավական հետևանքների առաջացում⁴: Հայրենական իրավական գրականության մեջ անվավեր գործարքի էությունն առանձին ուսումնասիրության է ենթարկվել Կ. Վ. Համբարձումյանի կողմից թեկնածուական ատենախոսության շրջանակներում: Վերջինս հանգել է այն համոզման, որ անվավերությունը և հակաօրինականությունն իրար հետ միշտ չհամընկնող, իսկ որոշ դեպքերում նաև տարբեր հարթություններում գտնվող երևույթներ են և գործողությանը իրավական գնահատական տալու տարբեր եղանակներ են և ցույց են տալիս այդ գործողության և իրավակարգի հետ հարաբերակցությունը⁵:

Այսպիսով, գրականության մեջ անվավեր գործարքի էության վերաբերյալ կարծիքները միանշանակ չեն, իսկ երբեմն էլ միանգամայն հակասական, ինչը, կարծում ենք, պայմանավորված է նաև գործարքների անվավերության հիմքերի բազմազանությամբ: Ինչ վերաբերում է կեղծ և շինծու գործարքներին, ապա նշենք, որ կեղծ և շինծու գործարքներն անվավեր գործարքների համակարգում ունեն բացահայտ տարբերվող առանձնահատկություններ: Նախ՝ կեղծ և շինծու գործարքները չունեն գործարքի համար նախատեսված իրավական արդյունքի հասնելուն ուղղվածությունը: Այստեղ հարկ է նկատել, որ այն հեղինակները, որոնք անվավեր գործարքները չեն դիտում իրավախախտում, հիմնականում հիմնվում են այն հանգամանքի վրա, որ անվավեր գործարքներն ըստ էության ունեն կամային ուղղվածություն՝ ա-

¹St`u **Ем В.С.** Гражданское право. В 4 г. Т. 1: Общая часть: - огв. Ред. Г..Л. Суханов. - 3-е изд., перераб. И доп. - М.: Волтерс Клувер, 2008. (Серия «Классический университетский учебник» Моск. юс. ун-т им М.В. Ломоносова), էջ 482 – 483:

²St`u **Крашенинников Е. А.** Последствия совершения порочных сделок//Проблемы понятийного аппарата науки гражданского и гражданско процессуального права. Ярославль, 1987, էջ 42:

³St`u **Рабинович Н.В.** Недействительность сделок и ее последствия. Л., 1960, էջ 13:

⁴St`u **Генкин Д.М.** Недействительность сделок, совершенных с целью, противной закону. Ученые записки ВЮОН. Вып. 5. М. 1947, էջ 50:

⁵St`u **Համբարձումյան Կ. Վ.**, Անվավեր գործարքների քաղաքացիական կարգավորումը ՀՀ օրենսդրությամբ, Երևան-2001, ի. գ. թ. գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, էջ 48:

առաջացնելու համապատասխան իրավական հետևանքներ¹, ինչը բացակայում է կեղծ և շինծու գործարքների դեպքում: Բացի այդ, կեղծ և շինծու գործարքներն առջինն գործարքի և որևէ այլ ոչ իրավաչափ գործողության համակցություն են, այսինքն՝ կեղծ և շինծու գործարքները պարտադիր օժտված են որևէ քողարկված հակահրավական նպատակով, կեղծ և շինծու գործարքները կամքի արատով գործարքներ են, որտեղ գործարքի բոլոր կողմերի կամքը չի համապատասխանում կամահայտնությանը, ֆիկտիվ գործարքները կնքվում են գործարքի բոլոր կողմերի դիտավորությամբ, բացի այդ՝ կեղծ և շինծու գործարքներն առջինն գործարքների առանձնահատուկ տեսակ են նաև այն առումով, որ ունեն ավավերության առանձնահատուկ հետևանքներ (երկկողմանի ռեստիտուցիան սովորաբար կիրառելի չէ նման գործարքների դեպքում²): Այսպիսով՝ կեղծ և շինծու գործարքները վավեր գործարքի պատյանում քողարկված իրավական ծնացում են, որոնց նպատակը գիտակցված հակահրավական է՝ ի տարբերություն մյուս բոլոր անվավեր գործարքների:

Նշված առանձնահատկությունների ամփոփումն առաջ է քաշում տրամաբանական այն հարցադրումը, թե մի՞թե կեղծ և շինծու գործարքները մաքուր ոչ իրավաչափ գործողություններ չեն, քանի որ չունեն գործարքներին բնորոշ համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելուն ուղղվածությունը, ունեն հակահրավական նպատակ և կնքվում են բոլոր կողմերի դիտավորությամբ: Նշված հարցադրման պատասխանը գտնելու համար անհրաժեշտ ենք համարում պարզել, թե արդյոք ֆիկտիվ գործարքներն ունեն իրավախախտմանը բնորոշ բոլոր հատկանիշները:

Ընդունված դասակարգմանը համապատասխան, որի հիմքերը դրվել են Սավինյի կողմից³, իրավունքի համար նշանակություն ունեցող բոլոր երևույթները (*իրավաբանական փաստերը*) բաժանվում են *իրադարձությունների* և *գործողությունների*, որոնք էլ իրենց հերթին բաժանվում են *իրավաչափ* և *ոչ իրավաչափ գործողությունների* (*իրավախախտումների*), ինչպես նաև գործողությունների, որոնք անմիջականորեն ուղղված են իրավական արդյունքի հասնելուն (այդ թվում՝ գործարքները) և անմիջականորեն իրավական արդյունքի հասնելուն չուղղված գործողութ-

¹ Տե՛ս **Афонина Е.И., Ширвис Ю.В.** Развитие института недействительности сделок // Вестник Федерального арбитражного суда Северо-Кавказского округа. 2005. № 5, էջ 76: **Шахматов В.П.** Сделки, совершенные с целью, противной интересам государства и общества. Томский университет, 1966, էջ 26:

² Կեղծ գործարքի անվավերության հետևանքների կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը. «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը կեղծ գործարքների անվավերության հատուկ հետևանքներ չի նախատեսել: Հետևաբար, ըստ էության, պետք է կիրառելի լինեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածով նախատեսված հետևանքները: Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ կեղծ գործարքի դեպքում գործարքի փաստացի կատարում, **որպես կանոն**, տեղի չի ունենում, նմանատիպ դեպքերում վերոգրյալ նորմի կիրառումն ունի առանձնահատկություններ, մասնավորապես՝ որպես անվավերության հետևանք կարող են լինել նախկին սեփականատիրոջ տիտղոսի վերականգնումը, դատական ակտով գործարքի կեղծ լինելու հանգամանքը հաստատելը, որը կարող է հանգեցնել որպես անվավերության հետևանք այլ ածանցյալ պահանջներ ներկայացնելուն (օրինակ՝ իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելը)» (տե՛ս թիվ ԿԴ1/0935/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի հուլիսի 22-ի որոշում): Իսկ որպես շինծու գործարքի անվավերության հետևանք՝ կիրառվում են քողարկված գործարքին վերաբերող կանոնները (տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մաս):

³ Տե՛ս **Savigny F.C.** System des heutigen romischen Rechts. Bd III. Berlin, 1840. § 104. S. 3 ff:

յունների: Կերչին դասակարգումն ընդունված է տարածել միայն *իրավաչափ գործողությունների* վրա, որոնց շրջանակում տարբերակվում են *իրավաբանական ակտերն* ու *իրավաբանական արարքները*, և առաջինների շարքին դասվում են գործարքները ու որոշ այլ ակտեր¹: Այսպիսով, գործարքները դասվում են իրավաչափ գործողությունների, մասնավորապես՝ իրավաբանական ակտերի շարքին, իսկ ոչ իրավաչափ գործողություններն էլ նույնացվում են իրավախախտումների հետ: Իրավաբանական ակտերն այնպիսի իրավաչափ գործողություններ են, որոնք մարդկանց կողմից հատուկ կատարվում են՝ որոշակի իրավահարաբերության մեջ մտնելու նպատակով²: ...Իրավունքի բոլոր սուբյեկտների գործողությունները իրավաչափ են այն դեպքում, երբ նրանք համապատասխանում են իրավունքի նորմով սահմանված թույլատրելիին և պարտադիրին (սուբյեկտիվ իրավունքներին և պարտականություններին)³: Իսկ իրավախախտումն իրավագործունակ անհատի մեղավոր վարքագիծն է, որը հակասում է իրավունքի նորմերի կարգադրագրերին, այլ անձանց վնաս է պատճառում և հանգեցնում իրավաբանական պատասխանատվության⁴:

Կեղծ և շինծու գործարքների օրենսդրական բնորոշումից բխում է, որ օրենսդիրը քննարկման առարկա իրավական երևույթի համար օգտագործել է հենց «գործարք» տերմինը: Ընդ որում, կեղծ գործարքը բնորոշել է որպես առերևույթ գործարք, որը կնքվում է առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության, իսկ շինծու գործարքն էլ կնքվում է՝ մեկ այլ գործարք քողարկելու նպատակով: Երկու գործարքներն էլ օրենսդիրը դիտարկել է որպես առաջին գործարքներ, այսինքն՝ գոյություն չունեցող գործարքներ: Եթե նշված գործարքների բնույթը բացահայտելիս հիմք ընդունենք այս իրավական երևույթի առանձնահատկությունները, ապա այստեղ գայթակղությունը մեծ է՝ հանգելու հետևության, որ կեղծ և շինծու գործարքները ոչ թե պատկանում են գործարք կատեգորիայի, այլ իրավախախտում իրավաբանական փաստերի շարքին: Մասնավորապես՝ կեղծ և շինծու գործարքները կարող ենք համարել ոչ իրավաչափ գործողություններ (իրավախախտումներ), քանի որ չեն համապատասխանում գործարքի վավերականությանը ներկայացվող պահանջներին, չեն համապատասխանում իրավունքի նորմով սահմանված թույլատրելիին և պարտադիրին, մասնավորապես՝ պայմանագրի ազատության սկզբունքի չարաշահման անթույլատրելիության պահանջին, գործարքի բոլոր կողմերի մեղավոր վարքագծի արդյունք են, սովորաբար կնքվում են՝ այլ անձանց վնաս պատճառելու կամ այլ հակաիրավական արդյունքի հասնելու նպատակով, և իրավաբանական պատասխանատվությունն էլ կարող է արտահայտվել այդ գործարքների անվավերության համապատասխան իրավական հետևանքներով: Մինչդեռ, մեր կարծիքով, նշված հատկանիշները բավարար չեն այս իրավական երևույթի էությանը ճիշտ իրավաբանական գնահատական տալու համար: Մեր կարծիքով, ֆիկտիվ գործարքի իրավական բնույթը պետք է բացահայտել ոչ թե օրենսդրի կողմից տրված նեղ բնորոշմանը համապատասխան, այլ՝ գործնականում այս երևույթի ամբողջական դրսևորումները հաշվի առնելով:

¹Տե՛ս **Тузов Д. О.** Теория недействительности сделок: опыт российского права в контексте европейской правовой традиции. Статут, 2007, Москва, էջ 7:

²Տե՛ս **Խրոպանյուկ Վ. Ն.**, Պետության և իրավունքի տեսություն (2-րդ հրատարակություն, լրացումներով, ուղղումներով), թարգ. Խաչիկ Հարությունյանի, Երևան, 1997, էջ 376-377:

³Տե՛ս նույն տեղում, էջ 386:

⁴Տե՛ս նույն տեղում, էջ 388:

Գործնականում ֆիկտիվ գործարքներ կնքող կողմերը չեն սահմանափակվում պարզապես առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության որոշակի գործարք կնքելով: Եթե գործարքը պարզապես կնքվել է առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության, ապա այստեղ մենք գործ ունենք ոչ թե կեղծ կամ շինծու գործարքի, այլ կամքի արատով այլ գործարքի հետ: Կեղծ և շինծու գործարքներն իրավական ձևացման մի ամբողջական գործընթացի որոշակի մաս են, որտեղ կնքված գործարքը ծառայում է որպես գործիք, միջոց՝ իրավական առումով քողարկելու որոշակի հակաիրավական գործողություններ, որպիսիք կարող են լինել պարտատերերից գույք փախցնելը, հարկերից խուսափելը, ընդհանուր սեփականության իրավունքում մասնակցի գնելու նախապատվության իրավունքը շրջանցելը և այլն: Ընդ որում, այդ գործողությունները կազմում են ֆիկտիվ գործարքների անբաժանելի մասը, և այդ հատկանիշի ուժով է առոչինչ գործարքը օրենսդրի կողմից դիտարկվում հենց կեղծ կամ շինծու գործարք: Պատահական չէ, որ մի շարք երկրներում «կեղծ կամ շինծու գործարք» տերմինի փոխարեն օգտագործվում է «սիմուլյացիա» բառը¹: Մասնավորապես, շինծու գործարքի տեսությունը (the sham transaction doctrine) մի շարք երկրներում հայտնի է որպես սիմուլյացիա (ձևացում, կեղծում) (simulation), իսկ մի շարք քաղաքացիական իրավունքի երկրներում հայտնի է որպես իրավունքի չարաշահում (abuse of rights), իրավունքից խուսափում (avoidance of the law)²: Օրինակ՝ «սիմուլյացիա» տերմինն օգտագործվում է Լուիզիանայի քաղաքացիական օրենսգրքով³ (1849-րդ, 2025-2027-րդ, 2480-րդ հոդվածներ)⁴, Իտալիայի քաղաքացիական օրենսգրքով (1414-1417-րդ հոդվածներ)⁵, Շվեյցարիայի քաղաքացիական օրենսգրքով (18-րդ հոդվածի 2-րդ կետ)⁶ և այլն:

Եթե առաջնորդվենք այն մոտեցմամբ, որ կեղծ և շինծու գործարքները հակաօրինական գործողություններ են, որոնցում առկա է գործարքի բոլոր կողմերի դիտավորությունը, ապա օրենքով կեղծ և շինծու գործարքների անվավերության հե-

¹Ըստ Հ.Ա. Ասմանգույանի և Մ.Ի. Հովհաննիսյանի համահեղինակությամբ հրատարակված անգլերեն-հայերեն բառարանի («Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1984, էջ 874)՝ **simulation - սիմուլյացիա, կեղծում, կեղծագործում, ձևացում, simulate - 1) ձևացնել, կեղծել. 2) նմանվել, նման լինել (որևէ բանի):**

²Տե՛ս Victor Thuronyi (Senior Counsel (Taxation), International Monetary Fund): Rules in OECD Countries to Prevent Avoidance of Corporate Income Tax: էջ 2:

³ԱՄՆ Լուիզիանա նահանգի իրավունքը հիմնված է աղբյուրների առավել բազմազան հավաքածուի վրա, քան մյուս քառասունինը նահանգների իրավունքը: Մասնավոր իրավունքն ունի քաղաքացիական իրավունքի բնույթ (civil law character)՝ հիմնված Ֆրանսիայի ու Իսպանիայի օրենսգրքերի և ի վերջո հռոմեական իրավունքի վրա՝ ընդհանուր իրավունքի որոշակի ազդեցությամբ: https://en.wikipedia.org/wiki/Law_of_Louisiana#_CITEREFParise2014

⁴Տե՛ս Louisiana civil code: Louisiana State Legislature - Legislative Law: Updated for the 2016 Regular Session: https://legis.la.gov/legis/Laws_Toc.aspx?folder=67&level=Parent:

⁵Տե՛ս Principles of European Contract Law and Italian Law edited by Luisa Antonioli, Anna Venezian. Published by Kluwer Law, International. 2005: էջ 284-285:

<https://books.google.ru/books?id=ADfOcChxr5YC&pg=PA285&dq=The+Concept+of+Simulation+in+European+Contract+Law&source=bl&ots=XQLcNjYphl&sig=3HmJu2BYmF4F93PV2k0xu2TodX4&hl=ru&sa=X&ved=0ahUKEwjC84Km58jOAhWE2hoKHceCAmQQ6AEIMjAD#v=onepage&q=The%20Concept%20of%20Simulation%20in%20European%20Contract%20Law&f=false>

⁶Տե՛ս Federal Act on the Amendment of the Swiss Civil Code (Part Five: The Code of Obligations) of 30 March 1911 (Status as of 1 July 2016)

<https://www.admin.ch/opc/en/classified-compilation/19110009/201701010000/220.pdf>

տևանքների շարքում կարող է կիրառվել նաև այդ գործարքների կնքմամբ պատճառված վնասի հատուցման կառուցակարգը, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, իրավախախտմանը բնորոշ է անհատի մեղավոր վարքագիծը, որը հակասում է իրավունքի նորմերի կարգադրագրերին, այլ անձանց վնաս է պատճառում և հանգեցնում իրավաբանական պատասխանատվության¹: Այսինքն՝ այդ դեպքում կենթադրվի, որ առկա է հակաօրինական արարք՝ ի դեմս կեղծ կամ շինծու գործարքի, վնաս, պատճառական կապ գործարքի և վնասի միջև, գործարքի բոլոր կողմերի դիտավորությունը²: Կարծում ենք, որ նման մոտեցումը չի կարող հիմնավորված լինել, քանի որ հնարավոր վնասի գոյությունն ուղղակիորեն պայմանավորված է ոչ թե կեղծ կամ շինծու գործարք կնքելով, այլ այդ գործարքների միջոցով իրականացվող հակաիրավական գործողություններով, այսինքն՝ գրեթե անհնար կլինի ապացուցել պատճառված վնասի և կնքված գործարքի միջև պատճառահետևանքային ուղղակի կապի առկայությունը: Բացի այդ՝ եթե կեղծ կամ շինծու գործարքը դիտարկվի որպես հակաօրինական գործողություն, որում առկա է գործարքի բոլոր կողմերի դիտավորությունը, ապա պատճառված վնասի համար կարող է առաջանալ համապարտ պատասխանատվության հարց (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1073-րդ հոդված), ինչը, կարծում ենք, հիմնավորված չէ: Բանն այն է, որ կեղծ և շինծու գործարքներում քողարկված հակաիրավական գործողությունը սովորաբար իրականացնում է գործարքի կողմերից մեկը, թեև գործարքը կնքվում է բոլոր կողմերի ընդհանուր համաձայնեցված կամքով:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ նշենք, որ սիմուլյացիայի դեպքում կեղծ և շինծու գործարքը, որը առջինն գործարք է, ինքնին իրավախախտում դիտարկվել չի կարող այն պարզ պատճառով, որ չունի իրավախախտմանը բնորոշ բոլոր հատկանիշները: Համաձայնելով բոլոր այն հեղինակների հետ, ովքեր չեն նույնացնում անվավեր գործարքն ու իրավախախտումը և գործարքի անվավերությունն ու հակաօրինականությունը դիտարկում են որպես տարբեր երևույթներ, նշենք, որ ֆիկտիվ գործարքներն անվավեր գործարքների տեսակներ են, որոնք օրենսդիրը հրաժարվում է ճանաչել որպես իրավական երևույթներ՝ չտալով դրանց իրավաբանական ուժ, քանի որ դրանք ինքնին ունակ չեն գործարքին բնորոշ հետևանքներ առաջացնելու, ինքնին արդեն իսկ գոյություն չունեն: Բացի այդ, գործարքների անվավերությունը կարգավորող նորմերի գործառույթներից է նաև պաշտպանել քաղաքացիական շրջանառությունը իր սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը խախտող հակաօրինական գործողություններից: Այդ նպատակով է նաև, որ կեղծ և շինծու գործարքները դիտարկվում են որպես առջինն գործարքներ՝ այդ հանգամանքի ուժով շահագրգիռ անձանց շնորհելով իրենց իրավունքների պաշտպանությունն իրականացնելու գործիքով, այն է՝ անվավերության հետևանքներ կիրառելու պահանջով դատարան դիմելու իրավունքով (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 4-րդ մաս):

¹Տե՛ս **Խրոպանյուկ Վ. Ն.**, նշված աշխատությունը, էջ 388:

²ՀՀ վճռաբեկ դատարանը բազմիցս անդրադարձել է վնաս պատճառելու հետևանքով հարաբերությունների ծագման համար անհրաժեշտ պայմանների առկայության հարցին, մասնավորապես արձանագրելով, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի ու պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը (ի թիվս այլոց, տե՛ս Նատալյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի թիվ ՀՔԴ3/0016/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):

Այսպիսով, թեև կեղծ և շինծու գործարքները չունեն վավեր գործարքներին և մյուս առաջինը գործարքներին բնորոշ կամային ուղղվածությունը՝ առաջացնելու այդ գործարքին բնորոշ իրավական հետևանքներ, այնուամենայնիվ, կարծում ենք, չեն կարող համարվել իրավախախտումներ: Ինչպես մյուս առաջինը գործարքները, այնպես էլ կեղծ և շինծու գործարքներն այն իրավաբանական ակտերն են, որոնք իրավաբանական ուժ չունեն՝ գործարքի վավերականությանը ներկայացվող պահանջների չպահպանման հետևանքով: Սակայն կեղծ և շինծու գործարքները կազմում են իրավական ձևացման մի ամբողջական գործընթացի՝ սինուլյացիայի բաղկացուցիչ տարր, որի դեպքում առաջինը գործարքն ուղեկցվում է հակաիրավական գործողություններով կամ դեռևս գործողության չվերածված հակաիրավական նպատակներով: Նշվածն էլ տեղիք է տալիս այս գործարքները իրավախախտում դիտարկելու ոչ հիմնավոր մոտեցման ձևավորմանը: Մինչդեռ իրավախախտում կարող է համարվել ոչ թե ինքնին կնքված գործարքը, որը գոյություն չունի իրավական և փաստացի առումներով, այլ այդ գործարքի քողի ներքո իրականացված ոչ իրավաչափ գործողությունը: Վերջինս էլ հակաիրավական է համարվում, քանի որ դրա իրականացման համար անհրաժեշտ իրավական հիմքը, այն է՝ վավեր գործարքը բացակայում է:

ПРАВОВАЯ ПРИРОДА МНИМЫХ И ПРИТВОРНЫХ СДЕЛОК

Ани Мутафян

Аспирант Кафедры гражданского права ЕГУ

Автором выявлена правовая природа мнимых и притворных (фиктивных) сделок в контексте сформировавшихся общих подходов в правовой природе действительных сделок. В результате чего автор пришел к выводу, что, хотя мнимые и притворные сделки не обладают волевой направленностью создать соответствующие заключенной сделке правовые последствия, что характерно для действительных и других ничтожных сделок, фиктивные сделки не могут рассматриваться как правонарушения. Как другие ничтожные сделки, так и мнимые и притворные сделки, являются юридическими актами, которые не имеют юридическую силу из-за несоблюдения условий действительности сделок. Однако мнимые и притворные сделки составляют часть полного процесса правового моделирования, то есть, симуляции. При симуляции ничтожная сделка сопровождается противоправными действиями или пока не превратившиеся в действия противоправными целями. По этой же причине сформировался необоснованный подход рассматривать эти сделки как правонарушения, в то время как правонарушением может рассматриваться не сама заключенная сделка, которая фактически и юридически не существует, а завуалированные этой сделкой неправомерные действия. Последняя считается неправомерной, так как отсутствует необходимое правовое основание для совершения этого действия, то есть отсутствует действительная сделка.

THE LEGAL NATURE OF FEIGNED AND SHAM TRANSACTIONS

Ani Mutafyan

Phd student of the YSU Chair of Civil Law

The author revealed the legal nature of feigned and sham transactions in the context of general approaches to legal nature of invalid transactions. As a result the author concluded that so in feigned and sham transactions the parties don't have the will to create the legal consequences of the concluded transaction as in valid and other void transactions, nevertheless fictitious transactions can't be considered as offenses. Feigned and sham transactions are legal acts which don't have legal force because of non-compliance with the conditions of validity of transactions. But feigned and sham transactions are a part of the whole process of simulation. In simulation the void transactions are accompanied by unlawful actions or unlawful aims which haven't been transformed into actions yet. That's why there has been formed an unreasonable approach to consider these transactions as offenses. Not the concluded transaction itself should be considered as an offense which doesn't exist factually and legally but the unlawful action, committed under the veils of transaction. The action is considered as an unlawful one as the necessary legal ground to carry out it, that is valid transaction, doesn't exist.

Բանալի բառեր – կեղծ գործարք, շինծու գործարք, ֆիկտիվ գործարք, իրավական բնույթ, իրավախախտում, սխմուլյացիա, ոչ իրավաչափ գործողություն, քողարկված հակաիրավական նպատակ, կամքի արատ

Ключевые слова – мнимая сделка, притворная сделка, фиктивная сделка, правовая природа, правонарушение, симуляция, неправомерное действие, скрытая неправомерная цель, порок воли.

Key words - feigned transaction, sham transaction, fictitious transaction, legal nature, offense, simulation, unlawful action, concealed unlawful aim, flaw in the will.